եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսինքն դատարանը արձանագրում է, որ առկա է դատարանի թիվ ԵԴ/52936/02/22 քաղաքացիական գործով վճիռ, որի համաձայն անվավեր է ճանաչվել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի 2023-2025թ. կարիքների համար ձեռք բերվող դեղերի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 3 արձանագրության 7-րդ կետերի որոշումը՝ <<Թեոֆարմա Իմպորտ>> ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով: Դատարանը նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 17 հոկտեմբերի 2022թ № 4854-Ա հրամանի կայացման հիմք է հանդիսացել հանձնաժողովի թիվ 3 արձանագրություն, որն էլ դատարանի թիվ ԵԴ/52936/02/22 քաղաքացիական գործով կայացված վճռով անվավեր է ճանաչվել, գտնում է, որ պետք է անվավեր ճանաչել նաև արձանագրության հիմքով կայացրած որոշումը:

Դատարանը ամբողջ վերոշարադրյալը իմի բերելով, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ հայցը ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

Տվյալ պարագայում սույն քաղաքացիական գործով հայցադիմումի ներկայացման համար հայցվոր կողմը նախապես վճարել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, հայցը բավարարվել է, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 104-րդ, 109-րդ հոդվածներով՝ Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել:

1. Անվավեր ճանաչել <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/8>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 17 հոկտեմբերի 2022թ № 4854-Ա հրամանը որոշումը:

2. ՀՀ Ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել՝ <<Թեոֆարմա Իմպորտ>>

ՍՊ ընկերությանը դուրս բերել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից:

3. ՀՀ առողջապահության նախարարությունից հօգուտ <<Թեոֆարմա Իմպորտ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես պետական տուրքի գումար:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտադրանքի հնարքներով:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ռ. ՂԵՐՍԻՍՅԱՆ